չափով որով առնուն զԹէին, այլ սակաւ։ Վասն սա ի հովանաւոր տեղիս ի մանաւոր սահմանի, ուր են լերինք երկայնաձիգ, և անտառք. ւօ հիլը Թաթարք կարգեալ կան ի ժողովել, որոյ ձեռն է միայն ձանձն, ոչ Թողուն այլեւս ունելք. և առ ի զգուշութիւն՝ առանձին ցանկով զառուցեալ է տեղին ի քանդօն գետէ. և առաջի նորա միշտ շրջին պահապանք. ձմեռ առնին ի մաքառառուն կայսեր լինու, որ առնու անտի երիս ուրկէ յիւրաքանչիւր ժողովողաց Թբք հարկ, և գյաւելեալն գնէ, և ինքն անդրէն վաճառէ ժողովրդեան, մի կշռոն վաճառի ի չին՝ երից կշռոց արծաԹոյ. իսկ յեբրայեցւոյ հոլանոտացիք վաճառէին երբեմն ըստ կշռոյ ոսկւոյ, իսկ ի յեսոնի ձմեռս ոչ այն չափ ծանրագին. Թերեւս զի փորձն երկար ժամուց ոչ էգիտ զղօրութիւնն ըստ համբաւոյն. ասի ևս Թէ ի մնայն երկաթ լինի ձմեռիւքեր և կորուսանէ զեբր զօրուն, բայց անդամ վճռականք եբրայեանց խառնեն ըստ այն և զնինչն. որ է այլ բոյս, և առաւել հնարք։ Զայս բոյս ծանօԹացուցին ի գաղղիա դեսպանք շնաւոյ Թագաւորին զոր բերին առ Լուսաւիկոս ժԴ։ Հայրուէ չինաց, այն է՝ էօտ ապաձը. է ծառ ինչ ապնիւ օտար ի հնդիկ անկոյ հայրուէի, նման ձիԹենւոյ. բուն նր բազկանայ յեռատեսակ փայտէ. առաջինն՝ զորով անմիջապէս պատէ կերգին, է սեաւ և ծանր, անուանեալ փայտ արծուոյ կամ Արծուափայտ, ապնիւ յոյժ և սակաւագիւտ. երկրորդն սպիտակ և ԹեԹև կոչեցեալ Քալէմպուկ. իսկ երրդն՝ որ է ի մէջն բնոյ ծառոյն անուանեալ Քալամպայ այնչափ ի յարգի է առ հնդիկս, և ըստ համարէն ասիա, մինչև կշռով ոսկւոյ վաճառել զայն. հոտ նորա անուշակ միանգամայն և օգտակար դեղ զօրացուցիչ նուճարէոյ և ուշաԹափելոյ։ Տերևօք նր դիւղականք ծածկեն զյարկս բնակուԹե իւրեանց. զոր վարեն և փեակ ակաւառակի. մանրաԹելք տերևոցն նման են կանեփոյ կամ վշոյ, ոլք պիտանացու են ի պէսպէս իրս։ Ջմուռս, ոլք են ի տերևան ի կիր արկանեն փեակ բևեռայ։ Ի հատանել զոստս ի բնոյ նր ծորէ հիւԹ քաղցր իբրև զմեղր. որ յետ սակաւ միոյ փոխի ի քացախ պատուճառական՝ մարթի և ևս ուսանել զնոյն ոստոցն, որ ունի զհամ շաքարեալ կիտրոնի։

Այլ յամ բոյս լինու առաւել համբաւելի՝ որ յաձախել է և առ մեզ, է բոյսն պատուճառական, զորոյ զտերև կոչեմք Թէյ. այն է՝ չայ ապնիւ զօրաւոր և սքանչելի, որոյ նման չիք այլ ուրեք։ Այս բոյս է

ծառ

ծառ փոքրիկ կմ մինչդ թուփ նման մերումն մրտեն_
ւոյ. թէպէտ և երբեմն առաւել աճէ և լինի ծառ
մեծ. բուսանի 'ի սերմանէ արկելոյ 'ի հող 4. 5 մատ_
նաչափ 'ի խոր: Յետ երից ամաց բերէ տերև առատ
կայժ. այլ յեօթներդում սակաւ. և յայնժամ հեր_
ձուեն զբուռն. և պատուաստեն 'ի նմ ընձիւղս, որք
փութով աճեն. և իւրաքանչիւրն բերէ գրեթէ նոյն_
չափ, որչափ ծառն ողջոյն: Ծաղիկ նր է սպիտակ
նման վայրենի վարդի. իսկ պտուղն կմ սերմն պէս_
պէս է. զի ոմանց է ոլոռնաձև, և 'ի միջի ունի հատս
մանունս և դեղնագոյնս. ոմանց 'ի չափ բակլայի.
այլ ձևոց այլ և այլ է. զի բոլորակ եռանկիւնի և
երկայնաձև. և 'ի միջի ունի երկու կմ երիս հատս
կմ կորիզս ոլոռնաձևս: Իւղ լինի ը բովանդակ ծն
չինաց. բայց ոչ ը ամ տեղիս ունի զնոյն զօրութի և
զպատուականութի. որք լինին 'ի հովիտս կմ 'ի ստո_
րոտս լերանց և 'ի քարուտ տեղիս լաւագոյն են ք
որք բուսանին 'ի դաշտս և 'ի կակուղ տեղիս:
Նոյնպէս առաւել պատուականն են, որք լինին 'ի
հիւսիսային նհնգս, ք որք 'ի հարաւայինս: Յամին
երիցս քաղեն զտերևն նր. նախ՝ 'ի մարտի, յորժամ
տերևքն մանր են քնքուշ և փափուկ, զոր չորացու_
ցանեն 'ի հովանաւոր տեղիս. և այն կոչի թէյ թա_
գաւորական. երբ զի ծախի 'ի պէտս իշխանակալին և
ազգունեաց նր և իշխանաց երկրին. զոր ոչ երբեք
հանեն արտաքս յծէ անտի իւրեանց. զերկրդն ժո_
ղովեն յապրիլի. և յայնժամ առաւել մեծ են և դա_
լարեալք. իսկ երրդ անգամ ժողովեն 'ի մայիսի և
յունիսի: Զերկուսին զայսոսիկ նախ եդեալ 'ի ծա_
կոտկեն անօթս և կալեալ 'ի վր եռացեալ ջրոյ մինչև
քաջ տամկացին 'ի գոլորշեաց անտի ջրոյն. ապա
սփռեն 'ի պղնձի ափսեայս, դնեն 'ի ներքոյ հուր մին_
չև ցամաքեալ չորասցին. յետոյ դնեն 'ի կապարեայ
տուփս, և քաջ խնուն զբերանն. ապա թէ ոչ՝ ը եր_
կար 'ի բացի մնալով կորնչի բնական զօրութի նր.
կմ դէթ նուազի: Գործածութի թէյին մեծաւ յեւ_
րոպիա զառաջինն 'ի հոլանտացւոց. յորոց էանց առ_
անգղիացիս, և անտի յայլ տեղիս: Ոմանք ջանացին
զբոյս նր փոխադրել և յեւրոպիա. բայց մինչև ցայժմ
ոչ լուաք թէ յաջողեալ իցէ:

Անուանի է և բամբակն առատ և ազնիւ, յորմէ գոր_
ծեն բիւրազգի բամբակի պաստառս նրբաթելս 'ի
հիացումն տեսողաց. և առաւել ք զամ յաճախեալ
է անդ մետաքս ընտիր. մինչդ թէ ժ առաւել հա_

ջանական կարծեաց՝ անդ նախ սկսան գործել մե-
տաքեայ կերպաւոր, և անտի հանց ՚ի պարսս. խակ
՚ի պարսից սիրեցաւ յերկրագիա։ Ունի և աղբի սա-
գի համեմ, որ գարնանիկ՝ որ է տատրկն ազնիւ ՚ք
գնելեան կղզւոյ. պղպեղ. եղեգն շաքարաբեր. կո-
ճապղպեղ՝ այն է՝ զինձիֆիլ. աղ, և այլ սեռսպ հա-
մեմ և բոյս բժշկականս։ Անուանի է և Ձկնու կո-
չեցեալ ծառն, յորմէ բղխէ հոչակաւոր խէժն քնդաց,
զոր այլազգեաց բարբառով վերնիճ անուանեմք.
որով օծանեն զյախճապակեայ անօթս. և սկաւա-
ռակս, և զըրոցս այն է՝ զուռթի, փոքրիկ արկեզս և
տուփս և զայլ սեռսպէս անօթս և կահս փայտեղէնս
և պղնձիս։ Ա՛յն խէժ նման է հալեալ խէժի որ ծորէ
՚ի սոճւոյ ՚ք ՚ի չամ ծառոյ. այլ ջուրն հոտ. յորժ՛
կամին օծանել լինչ նուաւ, խառնեն ՚ինձ՛ ևւզ յա-
էտ և նուազ ըստ պահանջելոյ նիւթոյ անօթոյն, զոր
ուղին օծանել։

Բայց յայլոց նորատեսակ արգասեաց պտանի ՚ի չին
և ազգ մի մոմոյ սպիտակ իբրև զձիւն յառնախեալ ըստ
բուանդակ ծն, բայց առաւելապէս ՚ի հուքվան և
՚ի քանթօն. որ ոչ է գործ մեղուաց, այլ փոքրիկ
ինն կենդանւոյ, որ չէ լինչ մեծ ՚ք զլուս։ Ա՛րդ՝ այն
փոքրիկ որդն անթերևոյթ կնձթաւ իւրով ծակէ ըզ-
ծառս, և ըստ մանալ՛ինն՝ ծծէ զհիւթ նոյ, և փոխարը
կէ զայն ՚ի մոմ սպիտակ. որ զօրէն արտասուաց ծո-
րէ ՚ի ծակատեաց անտի արտաքս. և գիւղականք ժո-
ղովեալ և արարեալ գնոսակս, տանին ՚ի վաճառ։ Յե-
տոյ ժողովեն ՚ի ծակատեաց անտի և զկենդանիս, և
պահեն. ապա ՚ի գարնան արկանեն զսերմն նոյ առ
բնակք այնոց ծառոց, որք յատմարաւոր են բնութե
նոյ. ուր կենդանացեալ, ելանեն ՚ի ծառն և սիրեն
յամ ոսոս նր. և վերսանն սկսանին զվերոյգրեալ
գործ իւրեանց, յոր անաչխատ վայելեն չինք։
Ունի և արօտս խոտաւէտս և ընտանի անասունս բա-
զումս. ՚ք անդեայս եզանց և կովուց. և հօտս ոչխա-
րաց, ոչխարք նր ըստ մեծի մասին դմակաւորք են. և
ձիս և ջորիս և ուղտս. ձիք չինաց փոքր են և ոտքեղ,
տակաւ և երկայն. և զի չունին պայտ յոտս, եղնգունք
նոյ փուխով մաշէ եղծանին. և այնպէս զինի հինե-
կի վեց ամաց գչխովին անպիտան լինին։ Խոշոր չէ
նաց առհասարակ սեռս են և կարճատն, այնչափ զի փոր
նոյ հասանէ ՚ի գետին. և թէպէտ չեն այնչափ պա-
տարտ ոտք առ մեզ. այլ միս նոյ համեղ է։ Ունի և
զմոմ սեռակս ընտանի հաւուց. յորս են, որք թէպէտ

նոյ-

Նոյնատեսակ են ը մերումս․ բայց արտաքին ձևով
այլազան: Են անդ և վայրենի չորքոտանիք, զի դայլ
արջ խոզ և այլ այսպէս գազանք․ և նմանապէս եղ-
ջերու այսպէս և տեսակ մի եղջերուին՝ որ առ այտ-
տով ունի մաշկեղէն պարկ, յորում գոյանայ հիւթ
ինչ հոտաւոր յոյժ՝ որ թուի լինել մուշկ:

Թռչնի և ձուկն առատ 'ի ծովէ 'ի գետոց և 'ի ջրան-
ցից․ որ և է կերակուր անհամար բազմութե գետա-
նեայ բնակչաց: Չինացիք որսան զձուկն ոչ միայն
կարթիւ և ուռկանաւ որպէս առ մեզ, այլև 'ի ձեռն մե-
ծամեծ թռչնոյ ինչ․ զորս վարժեն 'ի ձկնորսութե․
որպէս առ մեզ վարժին շունք և բազէք յորս թռչնոց և
չորքոտանեաց: Տարեալ արձակեն զնոսա առ գետովք
և լճիւք, որոց նոյնժամայն թռուցեալ սուզանին 'ի
ջուր․ և երկայնաձիգ կտուցաւ իւրեանց կալեալ
զձուկն զմիջաց, բերեն յափն գետոյն առ տեարս
իւրեանց․ և ապա թէ յորժամ մեծ ձկան հանդիպեսցին,
զոր մին միայն ոչ է բաւական հանել 'ի ջրոյ անտի,
այլք դիմեն յօգնութիւն նմ: Եւ յորժամ տեարք նց
տեսանեն զնս վաստակեալս, փոքր մի հանգիստ տան
նց․ բայց կերակուր ոչ տան․ մինչև հարուստ մի որ-
սասցեն․ և ը բոլոր ժմկն որսորդութե արկանեն 'ի
պարանոց նց օղակս, այն է՝ թամակ․ զի մի կա-
րասցեն կլանել զփոքր ձկունս, և յագեսցին․ և ոչ
ևս դիմեսցեն նովին յօժարութբ յորս:

Գտանին 'ի չին և բոյսք ոսկւոյ և արծաթոյ մետաղ-
ացն ձոյ անագի և երկաթոյ․ բայց բոյսք ոսկւոյ կան
մնան անգործ, զի կն տակաւ պատուէրեն մինչև ցա-
ռաւելուլ ծախուց ը զօգտուն, և կն զի շատ հա-
մարին զոսկին, զոր գետք ինչ և ուղխք բարձեալ բե-
րեն խառն ը աւազոյ և ը տղմոյ: Նոյնպէս և ար-
ծաթահանք նց անգործ լքեալ կան առ նուազութե
արծաթոյ: Են անդ և տեսակք ինչ ականց, և մարգա-
րիտ, և քարահանք պատուականաց մարմարիոն քարանց:
Այլ այս ամ բոյսք առ ոչինչ են առ համեմատութե
պատուական հողոյ, յորմէ գործեն յախճապակի, այն
է՝ ֆաղֆուրի երկատեսակ կմ եռատեսակ․ և ան-
տի չլինեն այսպէս անօթս, որք 'ի յարգի են ը ամ
տեղիս․ և են մի 'ի գլխաւոր վաճառուց չինու:

Են 'ի չին և հրաբուղխ լերինք, որք երբեմն այնպէս
բորբոքին, մինչև զարհուրելի միրկիս յարուցանել
'ի շրջակայ վայրս: Այլև ջրհորք․ յորոց ոմանք 'ի
վերին երեսս ցուրտ են․ իսկ 'ի խորս անդ ջերմ․
և ոմանք բոլորովին ջերմ, որք և եռան իբրև կաթ-

սայ յեռանդեան. վայ քէզմէ՝ ի չըջնակայ բնակչաց՝ ի նմ եփեալ հասուցանեն զկերակուր իւրեանց։ Էն անդ և լինիք, յորս ասեն թէ փայտն փոխի յերկաթ, կամ յայլ նիւթ կարծր։ Եւ՝ ի հայնան կողմն ասի թէ գտանի ջուր, բայց չգիտեմ թէ գետիցէ, եթէ լիճ. ուր թէ ընկեցի մանաւանդ իմն տեսակ ձկան, առ ժամանչն քարանայ։ Բայց այս, ոչ և փոխարկուածի վայրի՝ յերկաթ դժուարին իմն թուի։

Է. ՎԱՃԱՌ ՁԻՆԱՑ։

Պէտս լինաւոր վաճառք բաց յարդեանց երկրին, որք են թէյ, որիզ, փայտ բալամպայ, առ, գեղունչ, այն է՝ պուռնօթի. չինայ կամ քինինա էն, են և պէս պէս արուեստաւակերտք. որ անօթք յախճապակեայք, զոր թէպէտ և՝ ի Ճաբօն ևս գործեն, այլ չինացին լաւագոյն է քան զնոցայն ոչ և քան զայլոց տեղեաց՝ մանաւանդ աղնիւ նուրբ փայլուն և թափանցիկ. և աղբեր աղբի մեսաքսեայ կերպասաք միագոյն, և գունագեղ նկարեալ. այլև դիպակք ոսկեթել և արծաթաթել. և դերազանց բամբակի պատառաք նրբահիւսք, և անգուսք, այն է՝ սիւրբիւնճիւկ անօսրուինք պարզք և ծալկեայք և ծակոտկինք իբրև հիւսուածոյք. և պատկերք նկարեալք՝ ի թուղթս զարմանագեղ երանգօք, (այլ ըստ սկզբան յամարուեստից.) նաև և՝ ի հայելիս. բայց հայելիքն են յեւրոպիոյ. և հազվադեպ, այն է՝ եէլփաղէ՝ աղնիւս և գեղեցիկս. և հովանոցս, ոչ փոքրիկ չատրըս. և այլ պէսպէս արհեստակերտս. ոչ և զնոսին ստուերատական գործածութեան՝ ի վաճառօքդ։

Ջվճռականաւն չինաւ մարթ է բաժանել՝ ի նեղբին և յարտաքին։ Նեղբինն է առևտրուն, զոր նչնգբ նք առնեն ըստ միմեանս. զի ոչ գիրք և օդ նց և հող երկրին պէսպէս են սակս լերանց, գաշտաց, ձորոց և հովտաց, և սակս չորուն և խոնաւուն, ցրտուն և ջերմուն. նոյնպէս և բերք նց զնոչն են. զի են ինչ ինչ՝ ի միում նչնգբ, յորմէ ղուրկ է միւսն. կամ ինչ ինչ առատ է՝ ի միումն, իսկ յայլում նուազ. որ քանզի նչնգ՝ ի միում ամի բերէ որիզ և մեսաքս այնչափ, որչափ նչնգն փէքինուս ըստ սմն տասն ոչ բերէ. և ըստ հինգն նչնգն փէքինուս բերէ ցորեան և մնրաց ցորեան առատ քան զքանզնոն։ զնոյն է ասել և վնասլոց։ Յայն սակս հարկ է նց զպէտս իւրեանց՝ ի միմեանց լցուցանել. և այս իսկ է պատճառն, զի գեղք

և

և ջրմուղք չինու միշտ լի են նաւակօք, որ երթան և գան՝ ինչինգ՝ ինչինգ, և քղքէ՝ի քղք։ Իսկ սրտաբինն է առևտրութիւն, զոր առնէ ըստ օտար ազգս։ Այս վճռեալոյ ըստ արտաքինս ըստ բնի ժամկս սակաւ էր յոյժ և դրեթէ ոչինչ, ՚ի պատճառս արհամարհ և առոչինչ համարելոյ չինաց զայլ ամ ազգս, ըստ որս աստիճան համարիւն անձանց առևտրուիս առնել. և անհնարին ծանրաբեռն կապալս և հարկս եդեալ էին ՚ի վր նց։ Բայց երբև կալան թաթարք զինք նակալուն նց, թեթևացուցին զկապալս, բարձին և զարգեցս. որով այնուհետև մեծամեծ շարժակից արտաքին վաճառաշահուն չինաց ըստ ցամաք և ըստ ծով։ Եւ ինքեանք իսկ ոչք յիջադոյն ոչ երանեին արտաքս ՚ք զՁ իւրեանց, սկսան այնուհետև առնել նաւարկուեա սակս վճռշահուն ՚ի հնդիկս, ՚ի Ճաբան, ՚ի Ճեաւա կղզի, ՚ի փիլիպպեանս և յայլ կղզիս հնդկային ծովու։ Զև նաւուց նց փոքր մի այլազան են ՚ի նաւուց եւրոպացւոց. զի առաջք և յետոյք նց են տափարակ քառակուսի. և ՚ի նեղք սակոյն ունին քշմ անջրպետուիս բաժանեալ ՚ի խորշս խորշս առ ՚ի զետեղել ՚ի նն զվաճառս այլևայլ վճռականաց։ Առագաստք նց են փսխաթիք ծանրաշարժք, առ որ ոչ սակաւ աշխատուիս պէտ ՚ի պարզել և ՚ի ժողովել սակս կարկամուիցն. այլ ա-

մուր և դժուարահերձ։

Ընդ ցամաք ունի առևտրուիս ըստ քօրէսոյ. որոյ բնակիչք, որք Թուրին իջանել ՚ի Թաթարաց՝ այժմ հարկատու են չինաց։ Վաճառականք ոտցս ամի ամի երկոցս երթան ՚ի փէքին, ՚ք ՚ի մարտ և յօգոստոս. և տանին անդր Թուղթ հնդկ ՚ի մեծամեծ Թերթս, զոր գնեն ՚ի լուսաւորուտս տանց փխկ ստակոյ. և այլ Թուղթս ոսկեզօծս և նկարչեալս. հովհարս. ծղխախոտս աղնիս, որ ՚ի յարգի է ՚ի փէքին. պատառ քամբակի. և մորթս. այլև ազգ մի ազատ ձկան, զոր որսան ՚ի ծովն Ճաբօնայ. բայց տանին անդ և դրամս, զոր ստանան յեւրոպացւոց. վն զի արդելեալ է նց առնել առևտրուն ՚ի չին լոկ փոխանակուիք երից։ Իսկ ինքեանք առնուն ՚ի չինաց՝ Թէյ, մետաքս ազնիս. և սպիտակ մետաքսոյ կերպասս. յախճապակին անօթս և պղնձիս։ Ընդ պտուղսդ ցուցանեն, մինչև փոքունն պտղաբերիլ. որք տանին ՚ի չին բուռսս, որ ՚ի յարգի է առ նն, և անդամանդ այն է՝ էլլուսս անդորձ, բայց ՚ի սորին առատանին, և այլ տեսակս հնդկ և դիւրագին ականց. վն զի սակաւք գտանին

առ չինս, որք յօժարեսցին դնել մեծադին ակամն. զի առասել պատուհասական է յաչս նոցա բուսոս վարդապետին, ք զակինթի կարմիր. առանին և ոսկեփոշի կամ մանրիկ հատս ոսկւոյ, զոր ժողովեն՝ ի հեղհղատաց անտի պուխարիոյ։ Եւ փոխարէն առնուն՝ ի չինաց մետաքսեայ կերպասս, թէյ, ծխախոտ, յախճապակեայ անօթս, արծաթ, կաշի՝ ի պէտս հօշկաց, որ գայ՝ ի չին՝ ի մոսկովաստանու. և մորթս պէսպէս վայրենի երէից, որք նոյնպէս՝ ի մոսկովաց գնան անդր, այլև բամբակի պատուաս, և գիպակս եւրոպիոյ, զոր տարեալ վաճառեն զալմուխաց։

Առնեն չինացիք առևտուրս և ընդ Թաթարս, որք հարկատու են նոցա, այլ հանդարեալ են իբրև աղգ օտար. տան նոցա թէյ, և դեղունչ. այն է պուռնօթի և այլ իրս. և՝ ինոցանէ առնուն ոչխար, եղն, կով, և մորթս վայրի երէից. և առասել ընդ միմ՝ ընտիրք շատակեալ ձին սենկ զարմանն և զտերև նոր. որ բուսանի՝ ի Թաթարաստան չինաց՝ ի բարձրայս լերանց։ Իսկ ընդհակս ջանին չինացիք առևտրոյն ընդ ցամաք. վն զի յայն կողմանէն լերինք անմատոյց են և աւազուտք գժուարանցիք, ընդ որս գժուարին է յոյժ ձնորհուրդել, այլ միայն ընդ ծով։ Վնյ ցամաքային վաճառանոյն չինաց սակաւ է։

Իսկ ծովայինն ծանրագնաց յոյժ և ընդարձակ, զի ձգի գրեթէ ընդ ծ ամս. որ և հիմնեալ կայ՝ ի մետաքսեայ հերպասս, ՝ի թէյ, ՝ի յախճապակի անօթս, և այլ պէսպէս արուեստակերտս, զորս ծն չինաց մատուցանեն հարաւոյ այլոց։ Իսկ ինքն ընդունի ՝ի նոցանէ՝ ոսկի՝ ի ձագասոյ ոսկի և արծնձ. ՝ի պագավիոյ կիր՝ ի ձեաւոյ կղզւոյն՝ պղպեղ և այլ պէսպէս համեմս. զի թէ պէտ և՝ ի չին լինի պղպեղ և այլ համեմ, այլ սակաւ. որ չ բաւական բնակչաց նր. ՝ի չհամոյ փայտս՝ ի պէտս ներկարարաց և վերանիձ. ՝ի գունդինոյ մետաքս, ՝ի քօշինէնեայ շաքար և ոսկի։ Իսկ յեւրոպացւոյ՝ որ՝ ի շղէսաց, ՝ի դանեաց, ՝ի հոլանտացւոց, յանգղիացւոց, ՝ի գաղղիացւոց և ՝ի փորտուքալաց ընդունի դրամս, և ձոյլս արծաթոյ և այլ իրս. ոսկ ատ, կապար, երկաթ, ջուխտ և այլ ասուեղէն կերպասս. զի չինացիք զաւր խրճանց անգործ վաճառեն. բուսոս, գոճաղմ՝ այն է՝ քէհրիպար, ապակի, հայելի, ժամացոյցս ևն, զորս տանեն անդ եւրոպացիք ոչ միայն յեւրոպիոյ, այլև՝ ի վնիշն կողմանց հնդկաց ծի, ուր ունին կալուածս։ Իսկ ինքեանք առնուն՝ ի չինաց թէյ, ծաղկեայ և անծաղիկ կերպասս

մե

մեռաքեայս • բամբակի պատառաւս նրբաթելս , և անդուսս պէսպէս • յախճապակի անօթս • և այլ ազգի ազգի արհեստակերաս , որք յերջադոյն 'ի յարդի էին յոյժ և առ եւրոպացիս • այլ այժմ ոչ նոյնպէս • վասն զի և ինքեանք գործեն զնմանակս նոցա • թէպետ և երանգոց և և աղնուժութեն նիւթոյն անհամեմատաքար ստորին ք զլինացուցն ։ Այլ այժմ առևտրուն եւրոպացւոց և չինս չ այնչափ ինչ ծախիչ • զի բաց 'ի թէյէն գրեթէ այլ ինչ երաց չուներն պէտս 'ի նոցանէ ։ Այս ամ վաճառք , զոր քան կամ երեսուն նաւք բարձեալ բերեն յեւրոպիա , և հաշուին սկիզնիակայ հասանել ցերկուս միլիոն լիս հարիւր հազար վիճակեան ոսկի դահեկան • յորմէ մեծ մասն ծախի 'ի թէյն • բայց այժմ կարծեմ թէ ոչ հասանէ 'ի նոյն չափ ։ Իսկ մանուածք առնուն 'ի չինաց մանր մարդաբիտս , և ձոյլս ոսկւոյ • և թէպէտ արդելեալ է յոյժ չինաց վաճառել ոսկի օտարաց , սակայն նորին իսկ մանտարինք վաճառեն գոյլ որչափ և կարեն ։ Ա՞ր նուն և մեռաքեայ կերպասս՝ և մեռաքս անգործ • և բամբակ , բամբակի պատառաս սպիտակս և նկարչեալս , և թուղթս ծախիչայս , և դեղոնչ , շաքար , կոճապղպեղ , խաշխաշ՝ որ է ռեվէնտ , և այլ պէսպէս դեղոցայս և համեմս ։ Իսկ ինքեանք տանին անդ մորթս վայրի էրեոց , ոսկ սամոյր , քաքում , սեաւ և սպիտակ գայլս , որք գտանին 'ի սիպերիա առ լենայ գետով ,

և այլ պէսպէս մորթս ։

Նաւք եւրոպացւոց երթան միայն մինչև 'ի քանթօն ՁՂՔ , բայց ոչ սակաւ վիշտս և տառապանս կրեն ՆՔ անդ 'ի մաքսատեղւոյ և 'ի պաշտօնէից Նց , այլև 'ի վերակացուաց կայսերոց 'ի վր օտարաց , եթէ ա ռատ պարգևօք ոչ լցուսցեն զքաղց անյագ ագահութեն Նց • Թէպէտ զծանրաբեռն կտպաչս և հարկս , զոր քննագատին վճարել սակս մտանելոյ 'ի նաՀնդիստ Նց ։ Յերջադոյն կարօղ էին 'ի քանթօն ՁՂՔ անցանել և 'ի ներքսակողմն ցոր վայր մորթ էր նաւաղկել Նց ՀՀ դէտ • այլ յետոյ սակս դիպուածոց ինչ արդելին չինացիք ՀՀ մտանել անդր ՀՀ զքանթօն և ոչ քայլ ևս ոտին • ՀՀ նմին բարձին և զաղատուբին , զոր ունէին եւրոպացիք 'ի ՁՂՔ անդ • և սահմանեցին Նց առանձին տեղի բնակուԷ մեկուսի 'ի բաւն քնակաց ՁՂՔին , ՀՀ որս ոչ կարեն առնել հաղորդակցուԹէ ինչ , այլ միայն ՀՀ վերակացուս վճռականաց ՀՀ ոմանց վճռականաց ։

Վն վճռականացն չինու պէսպէս հարկաւք հնչին • զի

ոմանք գովին զնա իբր արդարակորով և անխարդախ եղեալ. և թէ չունին նք սովորութեամբ երկար սակ արկանել վաճառաց իւրեանց, այլ միանգամայն ասեն զբուն և զարդար գին նց, և այնուհետեւ այլ ինչ ոչ խօսին։ Իսկ լօքէր անգլիացի, որ անձամբ էառ վիրաւ նց ի քանեթօն քղաք, և այլք ոմանք յեւրոպացւոց զհիւրն վկայեն, զի ասեն թէ անհնարին խորամանկութեամբ դաւաճանեն ի կշռոց և ի չափս յորժամ կանգնաւ չափեն, այլև ի վաճառել ևս իրս, մինչև զնոցին՝ ոչ ասի, վնաս որևիցէ վաճառել. և դժուար բան է յոյժ ըմբռնել զնոսա դէպ ի նց։ Վշտ եթէ ոք յօտարազգի վճռականաց ի գնել չունիցի միջնորդ, ոչ թէեւայ հաւատարիմ. որչափ և արթուն իցէ, անտարակոյս դաւաճանի ի նմանէ։ Այլ ըստ ասելոյ սահմանի գործ մեծ է գտանել անգ միջնորդ հաւատարիմ որ ոչ միաբանեսցի ընդ վաճառողին ի դաւել զոտարականն. և յորժամ ի յայտ գայ խաբէութեան՝ ամենևին չքմեղս ցուցեալ զանձինս, ծանրութիւն իմն սիրնեն, յայս նոճագ չէզոք բարւոք մտադիր, և յայնմանէ եղև այդ վերնագիր. յայլ անգամ արասցուք ոմն արժան է։

Զրեթէ զնմ ինչ կշռով վաճառեն միմեանս և զձու, և և զբմպելիս և զկենդանին հաւս. յորում ոչ սակաւ դաւաճանութիւս գործեն. զի պատմեն՝ թէ ի վաճառել նց զընտանի հաւս կիմ զաղաւնի, զսագ և զբադ՝ բռնեն խնդրեն ի բերան և ի կանուսս նց խրձս, զի առաւել ծանր կշռեսցեն։ Երիտասարդ մի մեծագլխի, որ Թուխի լեալ ազգաւ անգլիացի, պատմէ թէ անդ ի չին գնոյ էառ կնկն խոզ բիմ ի պէտս արանց նաւուս իւրոյ. և երբև ածան խոզք ի նաւ անդը, վաղվաղակի սկսան մի առ մի սատակիլ. և ի սակաւ աւուրս առհասարակ սատակեցան։ Զայս համարի նա լեալ ի դաւաճանութէ վաճառողացն. որք գուցէ զկնի վաճառելոյ էտուն նց պիտանակար ինչ կերակուր։ Եւ զկարծիս իւր հաստատէ այնու, զի էտես աչօք, որ յընկերանուլ նաւավարաց իւրոյ զմեռեալ խոզս ի ծովն. նք յորոց գնէին ի ծովէ և առեալ ի նաւակս տանէին առ ի վերստին վաճառել այլոց իբր զենեալ ի սատանդանոցի, ոչ համարի նա ինքն։ Ասէ զի ասէ լօքէր թէ այնչափ է ապահուն նց և չհաւիրուն, զի յօժարութէ առնուն զատակեալ խոզ մի փխրկ կենդանւոյ, եթէ սատակեալն իցէ փոքր մի մեծ և պատրաստ ի զկենդանին։

Սակս այսր անհագ շահասիրութէ չինաց ի ներքինս

առ-

տուեալս իւրեանց բարձին զսակի և զարծաթի դրամս. և փոխան նոցա սահմանեցին պղնձիս. վն զի որ ը օրէ այնչափ բազմացան սուտ և պակասաւոր դրամք, մինչև ուր ուրեմն զատանել դրամս ճշմարիտս և ամբողջս: Այսպ յաղագս դիպուածոյ ինչ, զոր ոչ նշանակեն պատմագիրք, նուազեցաւ և պղինձն, և սկսան այնուհետև զգօլոր անուանեալ խեցի ծա_ ղային 'ի գործածել փխն դրամոյ: Այլ զխնի սակա_ ւուց արգելաւ, և եւ հրաման յինքնակալէն, զի պղնձի անօթք, որք գտանին 'ի բովանդակ Չի անդ, տարցին յարքունիս 'ի հատանել անտի դրամս. բայց և այն անբաւական գոլով, ձեռն արկին և 'ի պղնձի կուռս. յորմէ ասի թէ 400 մեհեանք քանդեցան: Զայս ամ 'ի սկիզբն կայ առեալ գրեցաք. այլ ճշմար_ տութեն նր յառաջին պատմիչն է ապաստան:

Այժմեան դրամք չինացւոց են կոտորակք պղնձոյ բոլորաձև, թանձր և անհարթ. չունին կնիք կմ պատ_ կեր դրոշմել 'ի վր. այլ 'ի կողմն մի են չորք տառք, որք զանուն ինքնակալին նշանակեն. և 'ի միւս կողմն երկու. և 'ի մէջն ունի ծակ քառակուսի, ընդ որ անցուցանեն զնոսա 'ի թել: Իսկ արծաթն, զոր վա_ րեն յառևտուրս չունի ձև դրամոյ. այլ է ձոյլ ան_ ձև, զոր կշռով տան միմեանց. յայն սակս ամքն կրեն կշռորդս հանապազ. և եթէ լիցի ինչ կասկած վն անմաքրութե արծաթոյն, հատանեն անտի մասն ինչ. և այնու ճանաչեն թէ գոյ 'ի նմա խառնուրդ ինչ թէ ոչ: Այլ այնչափ հմուտ են յայսմ, զի և լոկ շօ_ շափմամբ և տեսութբ, առանց հատանելոյ կարեն ճա_ նաչել, մինչդ եթէ արծաթն ձուլեալ իցէ ը սոլո_ բական եղանակի նց: Իսկ ոսկին, որպ ասէ հայրն քոնթի և այլք՝ ոչ 'ի գործ ածի անդ իբր դրամ. այլ դնի և վաճառի զօրէն այլոց վաճառուց, զոր յաճախ գնեն եւրոպացիք, բայց 'ի ծածուկ յայժ, զի ոմն ա_ ռացաք՝ խառնէ արգելեալ է հանել անտի ոսկի ար_ տաքս. սակայն նոքին իսկ մանտարինք 'ի ծածուկ վաճառեն. յորմէ բզմս շահին եւրոպացիք. զի անդ գին ոսկւոյ առ համեմատութբ արծաթոյն է իբր միոյ առ տասն. իսկ յեւրոպիա իբր միոյ առ հնգետա_ սան. և այժմ առաւել. որով 'ի հարիւրոյ շահին 50:

Ը. Բարք և Սովորութիւնք Չինաց:

Չինացիք իբր 'ի բզմս ը դրից մարմնոյ կարճ են հասակաւ, կմ լաւ ևս ասել միջահասակ. պըն_

դահաւոյ ուժեղակ լայնատէմք փոքրաձին և սեռաւ, հարձունչք տատիակաբնի, որ դեղեցիկ համարեաւ է առ նա. զոյն երեսաց նոյ ապիտակ ոյզ մերս. բայց հնրկ ժոլիզն, մանդ որք 'ի հիւսիսային և 'ի հարաւային կողմանս բնակին՝ թխագոյն են, զի զմեծ մասն կենաց 'ի բացի անցուցանեն 'ի տարժանակիր աշխատութիւն։ Մօրուք նոյ սովորաբար երկայն են այլ աղուոր։ Սափրեն զնեղս գլխոյ փունջ մի հեռի թողեալ 'ի յետ կուսէ. զայս սովորեալ թաթարք մանչին 'ի նոյ առ 'ի նմանիլ ինքեանց. զի յոլ բնիկ չէ նացիք ոչ սափրէին զվարսս գլխոյ։ Դրագեղք և վըշտիք նոյ թոյլ տան երկնցոյ մատանին աճել որչափ բերէ բնութիւն. որ զղջանալի նմն է առ մեզ. այլ նոքա զայն պարծանս համարին. զի նուաճ ցուցանեն թէ չեն պատասխել 'ի ծառայական և 'ի մեքենական գործս, այլ միայն 'ի ներվարժմանս խնամատուածից։ Ուշիմ են և նրբամիտ, սթափք և աշխուժք. մեծագործ և ծանրախորհուրդ, և գանգաղ յորոշման և 'ի գործադրութեան իրաց. և կարի մտադիր 'ի պատշաճ ծողութիւս։ Բնիկք գոլեն զնախանձ նոյ, զոր ունին 'ի պահպանութեան արդարութեան և բարի վարուց. այլ ըստ այլոց ասելոյ՝ այն նախանձ զոր երևեցուցանեն չէ այնչափ հիմնեալ 'ի ներքին ընթերցում և բարութեան նոյ, քան թէ 'ի հնացեալ իմն սովորութենէ, զոր ունին 'ի վայել զնոյ արտաքին նշանս ախտից և կրքոց. և մանդ յինքնահաճութեան ամբարհաւաճութենէ։ Գանգի ոյզ հաստատուն ետ մատենագիրք, որք խօսին զնոյ, մեծամիտ են և ինքնահաճ ունելով զսուգ իւրեանց 'ի համօրէն աշխարհի մինչ երբ մի միայն ժողովուրդ ընտիր և խնամատուն՝ բնակել 'ի միջակեան ծի 'ի լինել գերագոյն օրհնութեացդ և անօրէն հայհոյութեան ծի։ Խոկ զայլ ետ աղինս համարձին վայրենիս, բիրտս և երբ մարդակերս անասունս ցանել և ցորեան ունել յերկիր 'ի խորշս երկրի երբ գիրս և յաւելուածս մարդկեղէն քնութ. յոյր սակս և օրէնս ունէին չաւնել բնաւ հալորդութենէ ըստ օտար աշգաց. անվայել համարելով անձանց ըստ այնպիսի յետին սին ընթերս ունել ինչ կցորդութեան։ Վ՚ն այնորիկ յորժամ զառաջինն տեսին զերբոպացիս գործս քաջավարժս յամ գիտութեան և յարութեաս, յաղուշ կրթեցան, ուսան՚ է նոյ ասելն բնիկ զարմացմամբ, այսչափ գործ նուն և խնամատուն, որոց չէ երբեք ընթերցել գիրս մեր և ոչ գոն մեր տեսեալ, գոլով այսչափ հեռի 'ի մեզ։ Եւ թէպետ յետ այնորիկ ատացան վարկուն

ինչ

ինչ զեւրոպացւոց. բայց միշտ ատորին ունելով զնա
ք զինքեանս. իսկ վե այլոց ասիական աղանց ոչ փո
խեցին զկարծիս իւրեանց. ուստի իբր առակ է առ
նե, Թէ հոլանտացիք, որովք նմանան զեւրոպացիս՝
միականի են. իսկ այլ ամ ազգք կոյր. ինքեանք միայն
երկու աչս ունին։

Խորամանկ են յոյժ և նենգամիտ և ծայրագոյն կեղ
ծաւորք. որք և այնչափ քաջավարժ են՝ի պատրուա
կել առ աչուսըս զկրկնց յարձակմունս, և անկիրս և
բարեկեցիկս ձևանալ առ երեսս, զի Թէ ոք չիցէ
երկար փորձիւ և հմտութիւ տեղեկացել զնեղբին բա
րուց նոց, հաստատուիք դնել՝ի մահ, Թէ ամ գործո
ղութիք նոց և գնացք անկեղծ են և կամնասուորել ա
ռաքինութիք։ Վե զի կենակցութեն նց և քղքաւարուե
Թե քաղցր է, աղնուական և վայելուչ, այլ զի մոր
դեղոյզ շղտմութիք։ Իսկ՝ի ներքուստ այր իւրաքան
չիւր միշտ հետամուտ է և ուշադիր՝ի զննել զյօժա
րութի և զբերութեն բնութեն ընկերին, և զվնասման նր
՝ի գործս իւր, զի ըստ այնմ կեղծաւորեսցէ, որպատչ
պնա։ Յորժամ ըգխնամակս ինչ կրեն յոսմէբէ, առ ժամն
ծածկեն առ արտաքս զնամ կնքս բարկութե, խա
զաղ և անվրդով երևեցուցել զանձինս. և ապատեն
դիպող ժամու. յայնժամ ապա յեղակարծութեն Թա
փեն զծածկել Թոյն իւրեանց ըստ օրինակի սխակալ
ուղտուց։ Ագահ են յոյժ և անհնարին շահախնդիր.
վեյ և աշխատասիրք և ժրաջանք ամքն առհասարկ. չիք
առնե տեսանել դատարկապորոս կամ անգործս։ Ա
զամ փոյթ իւրեանց ունին՝ի նիւԹական բազմաշա
հութեսս. իսկ տեսական և ազատական արուեստք՝
ըստ տալաչափութե, ճոխաբանութե, երաժշտութե և այլ
այսպիսի արուեստք և մակացութիք իբր անօգուտ՝
առ ոչինչ համարել են առ նա, Թէ ոչ առ ամենն,
դէԹ հասարակաբար. ոչք և միշտ ունին՝ի բերանս
իւրեանց զայս բան՝ Ա՛ւ ինչ օգուտ է. զի ամ գոլ
ծոց մնենդ Թէ և բռնադակ կենաց նց առնելն և
վերջին կանոն է լոկ շահասիրութե։ Ցայն սակս իբր
անհնարին Թուի չլինել՝ի նա ստահաւատութիե և խա
բեութե. որով ճշմարտի և նախայիշատակել բանն յո
քերայ անպղնացւոյ, զոր գրէ վե պատճանութենց

վճռականացն չինայ։

Կանայք չինու իբր՝ի բազմն են փոքրակն, կարճուհչ
և սևահեր. և ոտք նց մնենդ մեծամեծ ոխկնաց տա
րապայման փոքր. վե զի անդէն՝ի ծնանիլ նց զնդեն
զոտս ուժգին, և ըստ ասելոյ ոմանց՝ ապուցանեն նց

երկաթի կօչիկս. զի մի ընդ ամենայն հասակին եւ ոտքն ոչ
մեծասցին։ Այլ ոտք երեսնամեան կնոջ չէ ինչ մեծ
քան զտաս եռամեան աղայոյ. եւ սրունք նոցա ընդհակառակն՝
սառեալ են եւ քոլոր մարմինն յոյր եւ փափկասուն.
ոչ կարելով նոցա համարձակ ընթանալ եւ գործել. որով
աւելորդ հին թաք մարմնոյ եւ թանձրամսութիւն նոցա մնա
նասցին, որ ըստ օրէնս յօրանան։ Ակընատեսութիւնս այսր
տարադէպ սովորութեանն նոցա, ըստ ասելոյ ոմանց՝ է լոկ
դիպեցիկութիւն. զի ոտք փոքր գերազոյն գիպեցիկութեամբ
համարեալ է առ կանայս չինաց. ոտ և պարարտն լինել և մնալիր, և փոքրութիւն և կարճունչ և մեծականչ։
Իսկ ըստ այլոց՝ է տարատեսութեան կասկած և նախանձա
ւորութեան արանց, զոր կրեն զկանանց իւրեանց. յայն
սակս՝ ասեն զի մի կարասցեն նոքա համարձակ ընթանալ և
երթալ ընդ ինքեանս ուր և կամեսցին, զայս հնարս գտին.
որ յետոյ էանց ի սովորութիւն, և ի գերեզկութիւն։
Տիկնայք մեծատանց գրեթէ ոչ երբեք երևին ի հրապարակս. իսկ թէ երբեք երևին, ընկերակցութիւն
բազմաց չքնաղ համեստութիւն. միշտ գաղել ունելով
զձեռս ի լայն և յերկայն թեզանիս. հանդարտ և
նազելի ի գնացս. այլ սովորաբար գահաւորակօք
ընթանան. զի ոչ զօրեն երկար յոտն կալ կամ հեռու ընթանալ
սակս փոքրկութեան ոտից. և յեղանել արտաքս ընդլուծ
և գաչս միշտ ի խոնարհ ունին։ Ընթեղս և մեծապինս
զգենուն. մոլեալ են ի պճնասիրութիւն. զի յամ ա
ռաւօտու ժամս ձիգս ծախեն ի լուծանալ և ի մաքրել զանձինս, և ի պճնապատմոյճ լինել։ Սաստիկ
զգուշութիւն ամրափակեալ պահին յառանձին բնակարանս, և ոչ երբեք երևին առն մարդոյ մինչդեռ մանկամարդք և աղկունք. զի և չինացիք առ որս օրէնս
է առնուլ բնմ կանայս, ունին նախ հրամ խոստա
գոյն ընդ զօսմանցիս և ընդ զպարսիկս։
Ընդեսս չինաց արանց և կանանց երկայն են ընդ ստ
վորութիւն արևելեայց, և լայնաթեւ. վերնիս կիսչորս
պարեզօտս ի վերն միմեանց զգենուն մի ընդ միմի կարճ.
ի ձմերայնի առնուն զանձամբն և մուշտակ երկայն
ոչխարենի կամ սամուրենի, և կիսի ի մորթոց այլոց
վայրի երեսոց. Թեզանիք մուշտակաց երկայն են և
լայն, յորս պահեն զձեռս հնձող՝ եթէ այր և եթէ
կին։ Գլխարկք նոցա պէսպէս են ընդ պէսպիսութեանց ե
րանակաց. զի ամարայինն ի սրածայր քիւլահաձև
այլ կարճ, և ստորին շրթունքն լայն նման ընդ խմիչ
գլխարկաց եւրոպացւոց, ընդ շափղայի. և ի հիւսեալ
ի նրբաշերտ եղեգանց ընդ օրինակի փսխաթի. և նեղք
ան

սակոյմն նը պատեէ և մեռաքսեայ կերպասիս . խակ
ի գագաթան ունի կարմիր մեռաքսեայ փունջ մեծ ,
որ յետ կողմանց կիջեալ , հասանէ մինչև ի չրեթունս
գլխարկին . վնյ յորժամ շրջին , փունջն այն ծածանի
յետ կողմանց ի հովահարուէ և ի շարժմանէ գըլ-
խոյն . որ վայելուչ համարէէ առ նմա :

Մանուարինք յորժամ գասանին ի հանդիսի խմիք ,
փեակ այնը փինջն դնեն ի ծագ գլխարկի իւրեանց ակն
ինչ յերեսէ յոսկի . որ անդամանդ հնրկ , կամ ակատ ,
կամ դոճաղմ՝ որ է քէհրիպար . և կամ ակն վանի . ո-
մանք ևս փեակ ական դնեն գնատկաձև կոճակ մեծ
չինել յոսկեթել գիսակէ : Իսկ ձմերայնին գլխարկք
նոյ են ի թանձր և թաւ խատիֆէէ սեաւ կամ մա-
նուշակագոյն . սաղրին կողմն պատէէ սամուրիւ կամ
աղուէսուս : Ի պարանոցս ի ձմերայնի ունին ուրա-
նոց լայն իբր ջորս մատնաչափ ի խատիֆէէ կամ ի
սամուրենուց և կամ յայլ մորթոյ : Ի մէջս կրկին գո-
տի մեռաքսեայ երկայն . զերկոսին ծայրս նը թողուն
ի կախ յառաջոյ , որք և հասանեն մինչև ի ծունկս :
Կօշիկք նոյ են մեռաքսեայ ի ներքոյ սպտակաւալ բամ-
բակի պատատուս . բայց ունին և մաշիկս կօշկիս ,
զոր ապանին յորժամ երթան ուրեք ի ճնապհ : Մա-
նուարինք կրեն ի վր հանդերձից սանձեդործ զարդ
ինչ ոսկի կամ արծաթի թեւլիս դործեալ . որ է նշան
իշխանուէ կամ պաշտաման նոյ : Նշանք գատուորացն
են պէսպէս թուչունք ըստ զինչնուրեն պաշտաման իւր-
եանց . խակ սպարապետաց և զօրավարաց վիշապ ,
առիւծ , և ինձ :

Զինագիք ըստանրապէս խօսելով չատակեր են , և կե-
րակուր նոյ խոշոր : Ուտեն զամ ինչ անխտիր . զի
բայց ի սովորական ջորբուտանեաց և թուչնոց և ձը-
կանց , որք են կերակուր այլոց քրիստոնեից և հրա-
հանգէէ Ժողովրդոց , աք ուտեն և զձի զկատու ըզ-
շուն զգորան և զօձ և զայլ ամ ինչ : Բայց հնրկ և
սովորական կերակուր նոյ է որով ոչուն և այլ ար-
մտիք և բանջարք պարտիզաց : Կրկին օրինակաւ բազ-
միմ ի սեղան . բնիկ չինացիք ուտեն ի վր բարձր սե-
ղանոյ ըստ սովորուէ եւրոպացւոց բազմէէ յաթոռս .
խակ որք ի Թաթարաց կիանեն , նք ըստ սովորուէն
պարսից ծնկնածալ նստին և ուտեն : Ձունին ի սե-
ղանի ոչ պատառս սփռեալ . ոչ թաշկինակ սրբել
ձեռս . ոչ սկաւառակ , ոչ դրգալ , ոչ պտուաքաղս .
այլ փեակ այսր ամի ի կիր առնուն փոքրիկ գաւա-
զանս սրածայրս փղոսկրեայս , կամ յոսկնալաղ փայտե

ար-

արծաթեայսըրդս . և նովաւ առնուն զմիս և զայլ
ճոնձր կերակուրս . խակ զրկիչ , զոր ասէրոթայսայ
յամաք եփեն իբրև զփիլաւ , և զայլ այսպիսի կե-
րակուրս սիտէղբաանին մծա ՚ի բերան , և նովին գա-
ւազանաւ ձգեն ՚ի բերան ։ Զնք բնաւ մաքրուն և
քղքահանուքի ՚ի սեղանս նոյ ։ Տանուտէր տանն կի
այլ ոք որ բաշխէ ՚ի սեղանն զկերակուրս . ձեռամբ
կալէ մանրէ զմիս խարշէ կի խորովէ . և առանց
սրբելոյ զձեռս մանրէ և զայլ կերակուրս առաջի
աչաց բազմահանաց . և նովին աղտեղի ձեռօք բաշ-
խէ նոյ . որ անվայել ինն է գովել քղքահանուէ չև

Նայեցոյ . զոր առ մեզ և ոչ գոհհիկ առնեն ։
՚Ի կոչունս մեծամեծաց ուրոյն ուրոյն բազմին . և
իւրաքանչիւր բազմական ունի սեղան մի առաջի ա-
ռանձին , եթէ բազմուէ հրաւիրելոյ ոչ սահմանեցէ
երկուց բազմիլ առ նովին սեղանով , ոչ պատուհէ
երբեմն . բայց կերակուր ամէն է միօրինակ . և յայն-
ժամ ՚ի կիր առնուն և սկսաւառակս յախճապակեայս
այլև արծաթիս ։ Ըմպելի նոյ է թէյ . և սեսակ մի
պօշայն , զոր հանեն յորիզոյ կի յայլոյ արմուեայ .
և այլ ինն ըմպելի գեղին և կարմրագոյն ոգելից և
զօրեղ իբրև զօղի , զոր Սամշուէ կոչեն . որ և է առ
նա փխակ գինւոյ . զի Թուրքի Թէ գինի ոչ ուտին , կի
ասեսա ։ Մնծամեծք լսկ զսուբ ոչ ըմպեն . վա զի
զսուբք Ծին չինաց ըստ մեծի մասին ծանր են և գժոհա-
բառնալս . վայ խառնեն ՚ի նմ Թէյ , սամշուէ ։ և կամ
զլսկ զսուբն նախ հռացուցանեն և այնպէս ըմպեն .
գուցէ առասի հղև սովորուէ առ չինս միշտ ջերմ ըմ-
պել . և ըստ հնումն զկերակուր խրթանց ցուրտ ուտել ։
՚Ի ձաշս և ՚ի կոչունս անբաւ խորտանս և սովորուհս
ունին . զի նախ ՚ք զբազմիլ ՚ի սեղան , տանուտէրն
առեալ բաժակ ոսկի կի արծաթի ՚ի ձեռին լի նա-
խապրէ ոգելից ըմպելեաւ ՚ի վեր ամբառնայ և ոչ-
ջունէ զմի ոք ՚ի հրաւիրելոց որ նախապատիւ է ՚ի
նա . ապա հղէ արտաքս և դարձուցէ զերեսս ըստա-
բուս , ընծայէ զայն առաջին բաժակ աներևոյթ ոգ-
ւոյ , զորս դնեն պահապանս տանն այնմիկ , և հե-
ղու յերկիր ։ Յետ այնորիկ բազմին ՚ի սեղան , այլ
ոչ ոք մերձենայ ՚ի կերակուր , եթէ ոչ զինն ըստ-
ոլջունելոյ և յարգելոյ զիմեանս պետս անդեթեթ
բեկբեկմամբ և կորացմամբ և երկրպագուբ ։ Ապա
առաջարարեա սեղանոյն տայ նշան պատրաստ լինել
ամէն առ ՚ի միանգամայն սկսանիլ ըզճաշն ։ Եպա՝ առ-
նուն ամէնքն զփոքրիկ բաժակ վերոգրեալ սամշուէ ըմ-
պել-

պէտ, և երկրորդումբք ձեռօք կալէր ամբառնան 'ի վեր ցբարձրուն գլխոյ, և անմեռունչ լոկ արուսեքին ակնարկուբք հրաւիրեն զմիմեանս հարուստ մի ձիկ նախ ըմպել։ Ապա ուշ եդեալ մնան, զի տաճարապետան տացէ նշան. յայնժամ ամբն առնուն 'ի ձեռս զերկու փոքրիկ գաւազանս, որք են փիկ պատառաքաղ գործեալ. ամբառնան 'ի վեր, և առնեն նոքօք պետութս շարժմունս՝ գրեթէ ոչ առնեն զինուորք եթ բոպիոյ 'ի զինուորական կրթուեան. ապա միսեալ զայնս 'ի սկաւառակն սկսանին ուտել ոչ կարի ձեպով զի մի յառաջեսցեն մի ք զմի. և ոչ յոյժ յամր, զի մի տացեն միմեանց սպասել. քզի երկոքեան և տմարդեալ համարեալ է առ նոս։

Յորմէ ուտեն զմի կերակուրն՝ դնեն զգաւազանս 'ի վր սեղանոյ 'ի նոյն տեղի և 'ի նոյն դիրս, ոչ եգան 'ի սկզբանն. և մատուցանի ըմպելի. զոր ըմպեն վերոյասացեալ օրինակաւ։ Յետոյ մատուցանի երկրդ կերակուրն, և յայնժամ վերստին սկսանին նոյն շարժմունք. զոր առնեն և յայլ կերակուրս, և յամ նը. ճապս ըմպելոյ մինչև ցաւարտ սեղանոյն. որ տեւէ բարեբար երկարի երկու կամ չորս ժամու. և ը բոլոր ձիկն սեղանոյն լռութբ նստին. և 'ի տալ տաճարապետին զվերջին նշան, ելանեն 'ի սեղանոյ խոնձք և վաստակ. և փոքր մի ձեմ առեալ 'ի պարտէզ կամ 'ի բակ տանն՝ խոտակցին ը միմեանս. ապա անդրէն դառնան 'ի սեղան ձաշակել քաղցրեղենիս և պտուղս և ըմպել զինւոյ։ Յայնժամ ածեն 'ի ներքս երգեցիկս և նուագածուս, որք երգեն և նուագեն, և առնեն անդ պէսպէս խաղս ձեւացուցանելով զպատմութիւն ջածոյ նոցա, կամ ումանց դիւցազանց. այլ թէ երգք նոցա, և թէ նուագարանք, որք են ծնծղայք, թմբուկ, և աղգ մի տրամաձայն սրնգի՝ են խառնաձայն լինի զօրանջմունք ծանր և անախորժ լսելեաց. և բանք խաղուց նոցա՝ որք սովորաբար են առասպելաց, անհեթեթ ամենևին և անարուեստ. զոր եւրոպացիք որք միանգամ լսեան բերանալիր գործէն ոչ միայն արք խնամոտունք, այլև բիրտ նաւավարք նոցա։ Այս և այլ սոցին նման խորանք և սովորութիք իրը հայրենասուր աւանդութիք և օրինք հաստատեալ և արմատացեալ են 'ի նոս, զոր ոչ ոք իշխէ երբեք լուծանել. ոչ միայն մեծամեծք, այլև յետին արհեստաւորք և ստամիկք. զի և նք 'ի ճաշս իւրեանց, և 'ի կենակցութեն ը միմեանս ունին սպասս սովորութիս. թէպէտ ոչ այնչափ, որչափ մեծամեծքն։

Նոյն.

Նոյնպէս յողջունելն զմիմեանս, կիր յերթալն յայցելուն միմեանց և յայլ ամ կենակցուելս անբաւ սովորութիւս և գործս քրիստոնէական ունին։ Սովորական և հնարկ ողջոյն նոցա է խաչաձև գնել զձեռս՝ ի կուրծս. և փոքր մի խոնարհել զգլուխ. իսկ յողջունելն զմեծամեծս ձեռնամած խոնարհին մինչ՝ ի գետին. և յերեսն ի տուն զոք՝ ի մեծամեծաց ծունր կրկնեն միով ծնգամբ։ Յորժամ բարեկամք հանդիպելին միմեանց՝ ի փողոց կամ՝ ի հրապարակս, առաւել՝ ըստ ըստաւորդ մի ժամու հարցաբանեն զողջունէ միմեանց նոյնպես և՝ ի հրաժարիլ՝ ի միմեանց ոչ դոյզն ճիկ ծախեն՝ ի հրաւիրել զմիմեանս յառաջել։ Ըստ նմին օրինակի յորժամ երթան՝ ի տուն յողջոյն միմեանց, անբաւ կանոնս և սովորութիւս ունին և գործս յարգուած, բիշ մանգամ ծախեն իբր կէս ժամ և աւելի մինչև՝ ի դրանէ մուտն՝ ի տուն և բազմեցին. զնոյն առնեն և՝ ի մեկնիլն՝ ի տանէ։ Լսօսակցուած նոցա և կենակցուած ծանր են՝ համեստ. քաղցր և պատուաբեր միմեանց. զոր ամէն միանգս պահեն. զի՝ ի բարեացս կան սկզբանց նոցա մին է այս, լինել քաղցր, համեստ, մարդասէր. և յամի ցուցանել հեզութիւն, զսպելով զյարձակումն կրից. զի այսու ասեն պահի խաղաղութիւն՝ ի մարդկային հասարակութեան։

Ասացի՛ր ինչ ի՞ բարուց և սովորութեց չինաց շատ լեալ. արդ ասասցուք ինչ ի՞ քրիստոնէից, ասից, և արքունի ճոխագոյն նոցա։ Քաղաքք չինաստան բաժանեալ յերիս կարգս զինչ նեալք՝ ի միմեանց մեծութիւն և նահապատուութիւն իշխանութեան. և ոչ բարք և սովորութիւնք նոցա ընդհանրապես ունին զմիօրինակ ինն տարազ, նոյնպէս և քրիստոնեից որչափ ինչ նեղեն գերիք տեղեաց. և բաժանել՝ ի չորս մասունս՝ ի ձեռն երկուց գլխաւոր փողոցաց, որք խաչաձև հատանեն զմիմեանս. և ձգին ուղղագիծ մինչև ցչորեսին գլխաւոր դրունս նոցա. զի ամ երևելի քրիստոնեից գլխաւոր դրունս ունի, որք հային՝ ի չորս կողմն Ցի. ի յարևելս յարևմուտս՝ ի հարաւ և՝ ի հիւսիս. Թող զայլ փոքր դրունս։ Իսկ այն չորք մասունք քրիստոնեից գարձեալ բաժանին յայլ փոքրագոյնս, որք պարսպեալքն առանձ առանձ տունս. և՝ ի վերջ իւրաքանչիւր տանեաց տանց կարգել կայ ասպիսեան կիր վերակացու տեղեկանալ զամէն անցից, որք անցանեն ըզդէմ օրինաց՝ ի փոքրիկ Թաղն անդ իւրում. և աղդ առնել մանաւանդ կիր քրիստոնէից։ Այլ տուն այնց Թաղից պարտապան են պաշտ-

պան

պան լինել և օգնել միմեանց։ վնաս յորժամ դէպ լինի մի անդ ելեալ ինչ, որ գիշերային գողուն, հրդեհ, մարդասպանուն և, բոլոր Թաղն պարտապան է՝ ի հատուցումն վնասուն։ Նոյնպես իբրաքանչիւր տանուտէր պարտական է համարս տալ ի՞ւր տեմ անկաղ գուէդ, որք գործին՝ ի տան իւրում յորդիս կամ՝ ի ծառայս։ Բայց յերկուց նախատրեալ գլխաւոր փողոցաց, և այլ փողոցք քիչքան նշ սովորաբար ուշիղ են լայն և տալայատակ։ սակայն և այնպես ոչ սակաւ նեղուածս կրեն, որք հետեւ չըջին՝ ի նոսա, սակս խուռն բազմութ երթևեկաց, մանաւանդ ձիաւորաց և գահաւորակաց։ Քիչ չինացիք մանաւանդ մեծամեծք ձիով և գահաւորակօք չըջին, ունելով յառաջոյ և ղհետ բազմութիւն ծառայից։

Տունք նշ առհասարկ՝ մեծամեծաց և ասկեհանաց են փայտաշէնք, միայարկք, և քառահուսիք, և մեծ քան բարձրութիբ, զի մի՝ ի նեղքաշելոյն միմեանց հայեցեալն։ Ջունին լուսամուտս՝ ի վէր փողոցն։ այլ են չըքնաղատես որմով։ և՝ ի չըքնաղատի անդ են ընդ ձակ բակք և պարտէզք։ Տունք մեծատանց են իբր պալատք մեծամեծք բաժանեալք՝ ի բազմապատիկ սենեակս և սրահս։ որք ունին և առանձին բնակութիւն վէր կանանց։ բայց առհասարկ միայարկ են։ իսկ պալատք մանաւանդ այնպես ընդարձակ են, որ թըռչուն մի մի փոքրիկ դեօղ՝ Դլխաւոր զարդք տանց նշ են արկեղք, պահարանք նկարչիք և գեղատիպք։ պէսպէս պատկերք մարդկան և չըքնաղութեանց և թռչնոց։ անօթք յախճապակեայք։ և բիւր մ վերնիք մեծապետ կերպասուց տպիտակ կախել ղրմովք, յորս գլխապրով գրեալ կան պէսպէս բարոյական խրատք։ Մահիճք նշ շքեղն պէսպէս քանդակօք յօրինել, և չըքնաղեսեալ վարագուրաւ կիմ սրսկապատեալք, որք են կրկին, ամարային և ձմերային։ Ամարայինք են մետաքսեայ կերպասք նրբաթել և ծաղկայօրինուածոյ։ ոմանց է անդուս, այն է՝ պլուրիճն, ձիւկ մեծադին և թափանցիկ։ Իսկ ձմերայինքն՝ ի թանձր ալեզատ, յորս նկարել կան վիշապք, Թըռչունք և այլ պէսպէս ուրուճական նմանութիբ։ Վերմակք նշ իբ եօրղանք, և անկողինք նման են մերոցն։ սովիմբ և եթ զնչնել, զի անկողինք նշ Թանձր են յոյժ՝ ք զմերս։ և փխեն երդոյ բամբակս ընուն՝ ի նոսա։ Ա՛ռ ամ երևելի քիչքաք գտանին ի կիմ երկու աշտարակք մեծահասուցեալք ինն յարկեան դրուճագեալք յախճապակեաւ։ յորոց զմի՝ որ դերագոյն է քան զայլս՝

զայլս՝ ունելիք սատրադրել յերեսուս տեղւոջ։ Եդին պէս պրեթէ չիտ երեւելի քաղաս կանդնել կան կամարք յաղթուռե ի սահմս թիքրաց և վարժապետաց ոմանց, որք երեւելի եղեն քաջութիւն, կիտ հնարեցին ինչ պատանացու ի կեանս։

Ընդունի ձնհդ չինաց Ցի չիտ տեղիս դիւրել և հորդել են առ ի դիւրուն նեղրին վճռականուե նշ. զի ըստ նախնի հռովմայեցւոց փոյթ մեծ ունին ի վերջ ձնհդայց։ Ի ձախին և ի մերուս տեղիս, ուր սակս ցածուե հաւաքել ջանան ջուրք, կուտեն հող և աւազ, և գործեն ձնհդ արահետ բարձր և անխոնդ ի ջուրց հեղեղէ։ Եւ ուր ընդաջ լինին լերինք և բլուրք, և խափանեն զանցս ձնհդայց, հարթեն և դիւրեն. խակ ուր չիք հնար հարթելոյ, տաշեն ըզ լեառն առ կողիս, և բանան ձնհդն. և ի տեղիս տե՛ղիս առ շարունակելոյ զձնհդն ի մէջ երկուց լերանց կառուցել կան կամարք աղարկուք, որպէս ոմն ի հնչակաւոր կամարըն ի ջինաց նհնդի, զոր անդ ունելիք սատրադրել։ Նոյնպէս և ի վեր ջրմոյց և դեղոց ըն ամ տեղիս են անհամար կամարք, առ ի տալ անցս ձնհդհորդայց ի միոյ կողմանէ ի միւսն։ Հնարկ ձնհդ ցին չինաց սովորաբար են երբ ուղտուն ոանաչան լայն. և հող երկրին աւազախառն, յայն տակ ի դադարիլ անձրեւի՝ թէպէտ և յորդ տեղացել լոյծ, վղվղիլ ցամաքի, և ոչ լինի անդ ալիմ։ Ի գաւառս լինչ առ ձնհդհօք յաջմէ և յահեկէ են այլ ձնհդ կամ մայթք այն է՝ խալտրըրմ փոքր մի բարձր ըստ ղբուն ձնհդն, չինել ի դիւրուն այնոցիկ, որք հետ ձնհդհորդեն. և առ նոքօք առակ և անակ անհնել կան կարգաւ ծառք մեծամեծք, որք հովանի առնեն անցաւորաց. և մէջ ըստ մէջ ի կէս փարասախ ի կէս փարասախ կառուցել կան ի վեր ձնհդն կամարք յաղթուռե բարձր իբր 30 ոանաչափ, բաժանել երկու դրունս կիտ կամարս. յորոց վեր դնել կան մեծամեծ տաւխք անոճանք քղքաց, ուր հանեն այն ձնհդապարհ։ Եւ ևս առ ևմ դէմառոր ձնհդօք չինեւալ կան փոքրիկ աշտարակք հողակերտք ի կէս փարասախ ի կէս փարասախ հեռի ի միմեանց, յորոց վեր կանդնեն արբունի դրօշս. և առ նոքօք են մի մի տուն ի բնակուե զինուորաց կարգելոց ի պահպանութիւն ձնհդայց։ Վնհ ձնհդ չինաց Ցի ըստ ևմ տեղիս անքոմ են և ապահով ի գողոց և յաւազակաց. ոչ

քա-

բիլմք ՚ի նոյե ՚ի չեռնին և ՚ի դառն աղքատութե էն, և բիլմ առատապանօք և ծանր աշխատութ հազիւ հայթհայթեն զառօրեական դարման կենաց. սակայն և այն ալեւ ուր ուրեմն ՚ի յայտ գայ անդ գոլ կիմ աւազակ. են ՚ի չին և թղթաբեր սուրհանդակք կար գաւառք եալք ըստ սուրհանդակաց եւրոպիոյ, և թէպէտ նք կացուցեալ էն միայն ՚ի սէտս արքունի իրաց, բայց և այլք կարօղ էն յանձնել նց թուղթս կիմ այլ իրս, առլով փոքր ինչ պարգեւս կիմ հաշտս իշխանին, որ կարգել կայ ՚ի վր սուրհանդակաց. Ձինայիք ըստ յամենայնի ճնշհորդութե իւրեանց առնեն ձիով կիմ ուղտով, կիմ ջորւօք, այլև գահաւորակօք, զոր տանին բազմութ մարդկան բարձեալ յոտս իւրեանց. բիլմք ասեն թէ նք և կառօք ճնշհորդեն, այլ ոչ նշանակեն թէ որպիսի ինչ էն կառք նց։ Եւ ՚ի բիլմ տեղիս առ ՚ի չգոյէ գրատուց և ջրոյ, մարդիկ բարձ եալ ՚ի թիկունս զխաստուց և ջրոյ, տանին ՚ք ՚ք ՚ք դառն և դժնդակ աշխատանօք։

ԺԹ. ԼԵԶՈՒ ՁԻՆԱՑ։

Լեզու չինաց է առանձին ինն բարբառ օտար զբոլ խոսվին յայլ ամ լեզուաց. և որս չունի բնաւ հաղորդութ ինչ կիմ մերձաւորութե ոչ ՚ի բառս, ոչ ՚ի խոսս, և ոչ ՚ի գիրս։ Ըստ վկայելոյ հօրն քօնթեայ ՚ի լեզու նց գտանին միայն իբրու 330 բառք բնաւք միավանկք, կիմ գէթ այնպես թուին լեղանակէ առ առաջնոյն նց. զի այնպէս լերկ արտասանին, որ մի միայն վանկ լսի։ Այս սակաւ բառք չին արդեօք բաւական ՚ի յայտնել զամ որ ինչ կարևոր է ՚ի մարդկային կեանս, եթէ ոչ էր նց գտեալ հնարս ՚ի ընուլ զայն պակասութն. իսկ հնարք են զնչն չքոք և եղանակք ՚ի հնչմունս բառից. զր սուր և բութ, լերկ և թաւ, սուղ և երկար, բարձր և ցած, կոկորդալեր և նուրբ, պարզ և եղանակաւոր ևն, որով բազմանան յոյժ խոնացուածք և նշանակութիք բառից։ Զայ ՚ի խոսելն հարկ է առ իւրաքանչիւր բառ կիմ նշանակուն առ զնւր սեփական չեշտ և եղանակ հնչման. առպա թէ ոչ՝ առ գոյն ինչ այլայլութե մեծամեծ վրիպակք գործին. և բան խոստովն լինի առնևին անխմանալի։ Զ զի բառք նց գրեթէ բովանդակ են հոմանուն բազմանշանակ. ոլք այլևայլութ հնչմանց որոշին ՚ի միմեանց։ Ջոր օրինակ. ահա նոյն բառ է, որ նշանակէ ծր և գաղան, ոլք լոկ եղանակաւ հնչման

որ

արուեստն. ուստի եթէ ոք անտեղեակ իցէ հարաշատ հնչման նոր միակ ասելոյ ՝ որ՝ գաղան ասացէ. ըստ այսմ և յայլ ամ բառս։ Նա վասն լեզուս նոյ, թէ խօսեցեալ ոմն արժան է, զինն իւր ազգ լինի երաժշտուհի. յոյր սակս և դժուարին է, և երկար և բազմաչխատ վարժուհի պէտք են անվհատ հնչել զիւրաքանչիւր բառ նոյ, զոր գրով բացատրել չէ հնար. այլ հարկ է վարժուհի և եթէ ուսանիլ, յար և նման մերոց երաժշտուհեան երգոց. զի թէ ոք չիցէ ուսեալ տիրապէս զեղանակս նոյ, լոկ ի խազս ապատատանել, ոչ երբէք կարցէ երգել ոմն արժան է։

Բարբառ չինաց է կոկորդալիր և հազագայնի. բայց ոչ այնպէս Թանձր ոմն արաբացւոց։ Զկնի ի նոյն հնչմունս ռայլ կիմ րէլ. որ Թուրի երևելի պահատուն, զի այս հնչմունք հնարկ են յամ բարբառս արևելեայց և արևմտեայց. և մեծ մասն բառից նոյ միապղս յանկին։ Ա՛ և ե ղանակ խօսից նոյ նուրբ է, մ՛ինն և համառօտ. սակաւ բառիւք բազմ ինչ իմացուցանեն։ Եւ ձառք նոյ ոչ են ըստ մերոց ձառից յօրինել վայելուչ գաւառորուբ պարբերուբց բանից, զի իւր ինքնաբերաբար և հարկաւ ի միմեանց բղխեսցին. և զարգարել յաճախուբ բառից. այլ են իւր հաւասարումն դերադանց փոխաբերուբց, ընդիր ընդիր նմանուբց, և խմաստասիրից առակաց և վճռոց իւրեանց նախնի խմաստասիրաց անյօդ և անշարայար. որոց իւրաքանչիւրն ուրոյն ուրոյն գեղեցիկ է և ազդու. այլ բոլոր հաւաքումն և գաւառորուն նոյ ցրիւ, անկարգ և անարուեստ։ Գլխաւոր լեզուս չինաց է միս ըստ մեզս, զոր կոչեն մանտարինեան և Թիբրականն. զի ի նոյն լեզուս խօսին յարքունիս և յամ առեանս. և որ ոք ոչ գիտիցէ զայն լեզուս ոչ կարէ երանել յիշխանուն լինչ կիմ ի պաշտօն։ Ա՛յլ բաց յըստ հանուր լեզուէ անտի իւրաքանչիւր նահանգ ունի իւր սեփական բարբառ գրեթէ անխմանալի յայլոց. զոր մարթ է նմանեցուցանել մերումս Ցաբառ լեզուին, որ ըստ զինին գեղացւոյ զինին է և անխմանալի միմեանց։ Ձուռնին այբուբենս փակել ըստ սահմանաւոր Թուոյ տառից յօդելեաց ըստ միմեանս շարամանուբ և հեգմամբ ի՝ ինչանակել զամ ազգ բառից, ըստ այլոց գրուցս գէտ ազանց. և զարմանան ըստ նմ թէ զիարդ կարեն սակաւ տառիւք զամ խօսս իւրեանց յօդել, և այնչափ ստուար մատեանս յօրինել։ Ա՛յլ փակ տառից ի սկզբան միապետուԹէ իւրեանց ի գործ ածէին ձեագրուԹիս ըստ սովորուԹ եգիպտացւոց ի յայտնել

ըստ-

զմիտս, որ էր առաւել նկարագրութիւն, ք̃ գրուած.
զի նկարելով զպատկեր իրացն յայտ առնէին զայնո֊
սիկ: Այլ յետոյ տեսեալ թէ անբաւական էր այն
'ի բացատրել զմ̃ իմաստս իւրեանց. ք̃զի թէպէտ
հնար էր զմարդ, զթռչուն, զձուկն, զանասուն նկա֊
րել, բայց ոչ նոյնպէս զկիրս, զսէր, զատելութիւն,
զձայն, զգիտութիւն եւ զայլ անհամար իրս, որք անմար֊
մին են: Ուստի իբր հարկեցան հնարել նշանագիրս
'ի նշանակել զա̃մ ազգ բառից՝ ուստի եւ զա̃մ ազգ ի֊
րաց, եւ ոչ այբուբենս. վ̃ զի որպէսեւ մի եւ նոյն
բառ ն̃ բ̃մ ինչ նշանակէ, եւ նշանակութիւն որոշին
'ի ձ̃ն ելեւէջութէ ձայնի. եւ զի զայն ելեւէջութիս չէ
հնար տառիւք բաղյօդել եւ բացատրել, հարկ էր
նշանագիրս սահմանել առ իւրաքանչիւր նշանակութ̃
եւ իր, եւ ոչ այբուբենս: Իսկ վ̃ն բազմացան յոյժ
նշանագիրք ն̃, մինչեւ անցանել այժմ զութսուն հա֊
զարօք, յանհնարին վիշտ եւ 'ի տարժանութիւն՝ ոչ միայն
օտարաց, որք ուսանին զայն լեզու, այլեւ նոցին իսկ
չինացւոց. որք զմ̃ ժմս կենաց ծախեն յուսումն
այնց նշանագրաց. սակայն եւ այնպ̃ մեծ ինչ է, թէ
գրագէտ ոք յետ բ̃մ աշխատութեց՝ հասանիցէ 'ի տե֊
ղեկութ տասն հազարաց. ուստի եւ դժուարին է ն̃
գտանել պարապ ուսանելոյ զառաւել կարեւորս եւ
զպիտանիս:

Ո̃ղ տառք, նոյնպէս եւ եղանակ գրելոյ չինաց օտար
է յայլոց ազգաց. զի ոչ ձգեն ն̃ք զտողն յաջ կուսէ
յահեակ՝ ը̃ եբրայեցւոց եւ արաբացւոց. եւ ոչ յա֊
հեակ կուսէ յաջակողմն՝ ը̃ մեզ եւ ը̃ յունաց եւ այ֊
լոց ազգաց եւրոպիոյ. այլ 'ի վերուստ 'ի խոնարհ ը̃
էջն 'ի վայր: Իսկ սկզբնաւորութ մատենից ն̃ ոչ է
'ի ձախակողմանէ՝ ը̃ մեզ, այլ յաջմէ՝ ը̃ արաբաց֊
ւոց. ուստի անդ սկսանին ն̃ք ուր մեք աւարտեմք.
Իսկ գրիչ ն̃ ոչ է եղեգնեայ կմ̃ 'ի փետրոյ, այլ նուրբ
վրձին, այն է՝ ֆռչայ, նման այնմ, որով նկարիչք
զպատկերս նկարեն: Իսկ ո̃ղ թուղթ՝ առ հարկի ա֊
րարին ն̃ք սովորութ այնպիսի կակուղ գրչաւ գրել.
վ̃ զի թուղթ ն̃ նուրբ է յոյժ եւ կակուղ եւ գրեթէ
թափանցիկ, յորոյ վ̃ր դժուարին էր կարծր գրչաւ
գրել. եւ վ̃ նոյն պտճ̃ի 'ի մի կողմն եւեթ թղթոյն
գրեն: Այս թուղթ չինաց է 'ի կեղեւոյ Բամբօն կո֊
չեցեալ ծառոյ: Հանեն զառաջին կեղեւն, եւ առնուն
զերկ̃դն, որ է փափկագոյն, կակուղ, եւ սպիտակ.
ծեծեն 'ի ջուր յստակ, եւ կազմեն անտի թուղթ. եւ
փնկ մածուցիկ նիւթոյ 'ի վ̃ր ածեն պաղլեղ, որ չտայ
թոյլ

Թոյլ ծծել զմեղանն. և առնէ առաւել ողորկ և տա-
հելի առ դրբաւ։ Բայց այս Թուղթ չէ ինչ տեւական.
ընդունի զխոնաւուն, և լինի ձանձիկեր, Թէ ոչ առեալ
Թօթափեացեն զմատեանս, և դնեցեն յարեւու։ Վասն
ոչ գոյանի ինչ ձեռագիր վասնզի յՀնդկաց գնեն. այլ
հարկ է նորոգել առեալ զգրատուենս նոցա՝ օրինակե-
լով, կամ միւսանգամ տպագրելով զհինն գիրս ի վե-
նոր Թղթոց։

Կոյնպէս և տպագրուԹիւն նոցա այլազան է ի մերմէս.
զի նոքա փորագրեն զնշանագիրս իւրեանց ըստ ձեւոյ ձե-
ռագրաց յայնչափ տախտակս, որչափ են երեսք մա-
տենին, զոր կամին տպագրել. ապա այն տախտակք
միայն առ նոյն մատեան ծառայեն։ Զայս եղանակ
տպագրուԹեան զառաջինն՝ի կիր արկին և յՀնդ մերում
առաջին գտիչք տպագրուԹեան. զոր յետոյ յայն առաւել
ձան կատարելուԹիւն Հասուցին յԵւրոպիա, ըստ զոր
կատարելագոյն և գմուսաւ իսկ ածել երևի Թէ չկայ
հնար. այլ չինացիք միշտ՝ինոյն կացին մնացին. ոչ
ևԹէ առ տպիտուԹիւ, իբր Թէ չգիտեցեն չինել և
չարժական տառս, զորս ասա ունին և այնպիսի նշա-
նագիրս փայտաշէնս, որով տպագրեն զԹղթականս
վձիռս. որոց Համառօտ գոլով՝ սահմանց պէտս ու-
նին, այլ զի նշանագիրք նոցա անհամար են, վասն և
դժուարին՝ մնալոյ Թէ անկարելի գոյ՝ ուրոյն ու-
րոյն ձուլել, և ապա առ միանգամիւք շարադարել՝ի
տպագրել նորօք մատեանս։ Պարծին Թէ ինքեանք
գտին զարուեստս տպագրուԹեան, ոչ և զվաւօԹ, և
զբևեռացոյց սլաք նաւուց, և զայլ գործիս չափա-
բանուԹեան։ Բայց այս անհաւանելի լինի Թուի. վասն զի
քաջայայտ է ամեն, եԹէ մեծի ճարտարուԹեամբ
են առ՝ինորոգ հնարել զինին, ըստ զհնարեալն կատա-
րելագործել։ Ասէ՝ յայտ է Թէ մինչև հայերդեալ
էին նոքա եւրոպացիք զգաղտնիս արուեստի իւրեանց,
այն ևս՝ անկատար էին յոյժ առ նոսա. այն զի և այժմ
գործիք չափաբանուԹեան, ոչ և պարզմանիք չինաց
առ համեմատուԹիւ եւրոպացւոցն՝ ոչինչ են ամենևին
և իբր տղայականք։

Ժ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՉԻՆԱՑ։

Յաշխարհս չինաց չիք ուրեք հնարիւք հասանելոտեան
յորս աւանդեացին գիտուԹիք և աղգի աղգի ա-
զատական արհեստք. այլ միայն առանձնական գըտ-
թ

քղքս․ յորս ուսուցանեն մանկանց ճանաչել զնշանագիրս իւրեանց եւ 'ի թղթի ձեւացուցանել կամ գրել, ընդ նոսին եւ զայլ մակացութիս․ այլ զմեծ մասն ժամանակի, կամ բոլոր կենաց վատնեն յուսումն նշանագրաց։

Գլխաւոր մակացութիւնք եւ գիտութիւնք, որք ասին 'ի վաղնջուց ծաղկեալ առ չինս են երկրաչափութիւն, թըւաբանութիւն, եւ առաւել քան զամ՝ աստեղաբաշխութիւն։ Այլ որ ինչ սքանչելին պատմի յայսմ մասին զնոցանէ բովանդակ առասպելք են։ Վն զի երկրաչափութիւն նց յետ այսչափ դարուց՝ այնպէս է, որպէս թէ նորոգ սկսեալ էր 'ի լոյս ելանել, աղքատ ամենեւին եւ չնչին․ բովանդակեալ 'ի քանի ինչ նախադասութիս գործնականս եւ դիւրինս․ զուրկ 'ի տեսական սկզբանց եւ 'ի նախադասութեց։ Ըստ նմին օրինակի եւ թուաբանականն գիտութիւն նց բովանդակի 'ի գործի ինչ, որ է փոքրիկ տախտակ ոտնաչափ մի եւ կէս երկայնութը․ եւ 'ի վր ունի տասն կամ երկոտասան գաւազանս զուգահեռականս․ յորս անցուցեալ կան բազմութիւն մանր գնտակաց շարժականաց․ եւ նոքօք վճարեն զամ հաշիւս իւրեանց․ որպէս սովորութիւն է առնել եւ այլոց ամենայն եւրոպ ժողովրդոց։ Նոյնպէս եւ գիտութիւն աստեղաբաշխութեն անկատար է յոյժ։

Ճշմարիտ է թէ այժմ տոմարական գիտութիւն նց առ փոքր մի կարգաւորեալ է․ եւ ժամանէ ցայն վայր, մինչեւ նախագուշակել զխաւարմունս արեգական եւ լուսնի․ բայց զայն յեւրոպացւոց ուսեալ 'ի հարց միաբանութե յիսուսեանց․ վն զի նախ քան զհասանել նց անդր, չինացիք այնչափ խորին ագիտութը վարակեալ էին 'ի մասին աստեղաբաշխութե, մինչեւ համարել նց թէ 'ի խաւարել արեգական կամ լուսնի՝ վիշապ ահագին կլանէ զնս։ Կարելի է, ասեն, թէ կարի հաւանելի թէ միայն ռամիկ ժողովուրդն էր յայս բիրտ կարծիս, եւ ոչ գիտնականք նց․ որպէս եւ մինչեւ ցայսօր խառնիճաղանճք չինաց 'ի նոյն միտս են․ որք տեսեալ զխաւարել արեգական կամ լուսնի, սկսանին ծնծղայս հարկանել, փողս հնչեցուցանել, լալ եւ մեծաձայն աղաղակել առ 'ի հալածական առնել զվիշապն։ Սակայն այս ճշմարիտ է, թէ նաեւ նոյն իսկ աստեղաբաշխք նց, մինչեւ էր հասեալ անդր յիսուսեանց, չունէին զպայծառ ծանօթութիւն զդրից երկնից, եւ գուցէ չունին եւ այժմ։

Եւ չէ մարթ հաւատալ եւ զայն, զոր ասեն ոմանք զչինացւոց, թէ գիտեն նք գուշակել զդարձ գի-

աաւորաց • զկարգ պարբերուեցաւ մնջորակաց զարե-
գահամբ, և զխոփոխս խաւարմունս նոցա • վն զի առ
այն բնիմ և այլ ծանօթուեցաւ ակեաք են, և նուրբ և
խորին թուաբանուեցեն • յոր չև են հասեալ վինայիք։
Բայց զայս խոստովանիլ պարտ է, թէ ախտարմունք
նոյ քաջահմուտ են յիւրեանց արուեստի, կամ դէթ
այնպէս կարծին • և չեն ինչ զարմանք • վն զի առ՝ի
երևելի լինել յայնմ, շատ է՝ ոչ ասէ հայրն քննելի՝
լինել նենգամիտ խաբեբայ, և գիտել խորամանկու-
սուտս յօդել • յորում՝ ըստ սալմոնի, չիք իրրև զլինս։
Վայ և բազիք են՝ ի նոսա այնպիսի խաբեբայք, որք
պարծին՝ ի ձեռն ատեղապիտուեն դուշակել զապա-
գայս • և ամի ամի առնեն աղիւսակս, որով նշանա-
կեն զյաջող և զանյաջող աւուրս վն ամուսնուեն և
վն ճնդհորդուեն ըստ ծով և ըստ ցամաք • և զայլ պէսպէս
սուտ և խաբէական դուշակուեանս։ Տրամաբանական
գիտուեն, որ դուրն է այլոց գիտուեցեց՝ անծանօթ
է նոցա • բնաբանուեն կամ բնական փիլիսոփայուեն և ճար-
տարապետուեն՝ հազիւ նշմարանիք լինչ երևին առ նոսա։
Կարծեն ունել զգիտուն երաժշտուեն • զորմէ պարզ
ծին և այ թէ լինքեանք հանճարեցին, և յետոյ՝ ի վեր-
ջին ծագ կատարելոյեն հասուցին • այլ կամ տգիտու-
թեբ խաբին, և կամ եթէ հնարեցին և այ, յետոյ խափա-
կորուսին • վն զի այժմեան երաժշտուեն նոցա այնչափ
բերտ է և անարուեստ • զի և անուանն իսկ երաժշտու-

ԹԷ ՉԷ ԱՐԺԱՆԻ։

՝ի բժշկական գիտուեն ևս տկար են և յետնորդ • զի
բայց՝ ի ծանօթուեն խոտոց լինչ և արմատոց, զոր ա-
ռաւել՝ ի փորձոյ ունին և յաւանդուեն, քբ՝ ի դրոց,
յորոց և կազմեն զամ դեղորայս նենգանց, յայլուեմ
ամի գրեթէ չեն լինչ ըստ այլոց բարբարոս ազանց։
Եւ թէպէտ պարծին նոքբ քաջ ճանաչել զդարկ բաղ-
կերակին, և անտի գուշակել զհանգամանս հիւան-
գուեն զծանրուեն նոր և զտևողուեն, և թէ մահաբեր
եցէ թէ ոչ • բայց չէ պարտ և յայնմ՝ առեն հարքն
յեռանբ՝ կարի լինն վստահանալ՝ ի նոս • զի սակաւբ
յոյժ գտանին, որբ ունիցին զդոյզն լինչ տեղեկուեն
զայնմանէ։ Եւ պճճուն է, զի բժշկուեն ատ չինս է
երբ մի՝ ի հինգին և յատաւել գիւրին արհեստից • յոր
ոմ և իցէ անխտիր համարձակ ձեռն արկանէ յորժամ
ջունի զայլ արհեստ՝ ի ձեռին առ՝ ի նուաւ գտանել
զառօրեայ պէտս • զի չիք անգ փորձ և քննուեն բժշ-
կաց • վն ամ դատարկանձն և դործատեաց անձամբ
զանձն կացուցանէ բժիշկ՝ ի կորուստ երկեբլի հիւան-

դաց։

դաց։ Յայսմ ամէ զոր ի հաւատարիմ մատենադրաց առեալ դրեցաք, քակտեալ երևի սուրբ բանիւ նոցա, որք ներհուն քարոզեն զվիճակս յամէ գիտուեաս, և մինդ ի չափաբանականս, և յատուկ զաբաշխուեաւ. զի ոմն տեսաք՝ ոչ այնք, և ոչ այլ գիտուիք երբեք ծագկեցան առ նմա. սակս թէ ոչ, զի՞ է զի յետ այսչափ բիւրաւոր դարուց ժամից, ըստ որս պանծանօք երկարաձգեն զկնուն որուն խրեանց, չերև երբեք ի նմ ոք երևեալ ի գիտուն իմիք, որ ի չափաբանուն, յատուկ զաբաշխուեաւ կամ յայլ գիտուիս։

